իրար վերայ կուտուած մոխիր և աղբ քարերն անհշմարելի դարձուցած են. անմաքրութիւնը ամեն կողմ տիրած է շինութեանց անյարմարութեանց պատճառաւ. ճեմիշ չկայ. երբեմն սատակած անասունք դռներու առջև կը ձգուին. ամառը քամին ամեն պղծութեանց փոշին օդը կը բարձրացնէ, ամեն անկիւն կը լեցնէ. նաև շատ անգամ ժողովրդոց թոքերուն մէջ տեղ կը գտնէ։

Քաղաքիս աւերակ և շէն թաղօրայք են, Պէհնան, Սորանցոց, Փեթակճոց, Դարաղի թաղ, Ցարաղաճի թաղ, Թանտուր եսմամներ, ճրաբըներ, Շներու կամ Գեսի, Ջքոյի, Ցուքներու Բերդի տկի և Միրանի թաղ և այլն։

Միրանի թաղից արևելք 3 քիլոմէթր մինչև դերեզմանատուն աւերակաց կոյտեր են, հաստ պարիսպներու հիմերն դեռ կան։

Եկեղեցի.—Շուկայն որ երկու հակեալ փողոցներու կը բաժանուի, հարաւ և արևելեան հարաւ, այս երկու փողոցներու վերջաւորութեան միջավայրից քիչ ներքև կը գտնուի եկեղեցին Ս. Աստուածածին անուամբ, որ աղօթատեղւոյ շնորքից զրկուած է։

Եկեղեցւոյս դիրքն ի հարաւ հակեալ վայրի վերայ է, բաւական ընդարձակ, 12 փայտեայ սիւներու վերայ հաստատուած. փայտեայ ծածք ունի, հին և խարխուլ դրութեան մատնուած. բայց ի քանի ջերմեռանդ հայերից մէկը չը համարձակիր ներս մտնել փլելուց երկիւղ կրելով։ Հիւսիսային որմն դրսից բոլորովին հողի մէջ է, խորանը կամարակապ։ բայց բոլորովին անճաշակ և խարխուլ, մի դարու շինութիւն հաղիւ եղած լինի։

Եկեղեցիս ըստ աւանդութեան քանի անգամ այ-